

ՊԵՐՐԻ ԱՅՍՕՐ ԿԸ ՄԵԿՆԻ ՍՈՒՏԱՆ

Խորհրդարանի նախագահ Նեպիի Պերրի այսօր պաշտօնական այցելություն է ունենում Մոսկվայում, գլխավորելով երեսփոխանական պատվիրակությունը։
Սուտանի մեջ Պերրի հանդիպումներ պիտի ունենայ Սուտանի նախագահ Օմար Հասսան Պաշիբի եւ սուտանցի իր պաշտօնակիցին՝ Ահմետ Իպրահիմ Թահերի հետ, ինչպես նաև խօսք պիտի առնէ Սուտանի խորհրդարանին մեջ։

ՆԱԽԱՐԱՐ ՕՊԷՅՏ ԸՆԴՈՒՆԵՑ ՌԻԱՏԻ ՄԷՋ ՋՈՂ ԳԱՑԱԾ ԼԻԲԱՆԱՆՑԻՆԵՐՈՒ ՀԱՐԱՋԱՏՆԵՐԸ

Արտաքին գործոց եւ արտերկրի իրաքանցիներու հարցերու նախարար Ժան Օպէյտ երէկ ընդունեց Ռիատի մէջ տեղի ունեցած պայթումին զոհ գացած իրաքանցիներու հարապատաներուն մէկ պատուիրակութիւնը։ Օպէյտ ցաւակցութիւն յայտնեց ընդգծելով, որ արտաքին գործոց նախարարութիւնը Մէնուական Արաբիոյ իշխանութիւններուն հետ պիտի աշխատի՝ պայթումին ծայրերը յայտնաբերելու համար։
Օպէյտ ըստ նաեւ, որ պաշտօնական դասաւորումներ կը կատարուին իրաքանցեան եւ սէնտական իշխանութիւններուն միջեւ՝ պոհերուն ընտանիքներուն կատարուելիք հատուցումներուն գծով։
Միւս կողմէ, Օպէյտ երէկ հեռագիր մը յղեց ռուս իր պաշտօնակիցին՝ Իկոր Իվանովի, ցաւակցութիւն յայտնելով Մոսկուայի մէջ ուսանողական հանրակացարանի մը մէջ հրդեհին պատճառած պոհերուն համար։

ՇԷՅՆ ՔԱՌԻՔ ՅՈՅՍ ԿԸ ՅԱՅՏՆԷ, ՈՐ ԳԵՐԻՆԵՐՈՒ ՓՈՒՆԱԿՄԱՆ ԳԾՈՎ ԲԱՆԱԿՅՈՒԹԻՒՆԵՐԸ ՇՈՒՏՈՎ Կ'ԱՒԱՐՏԻՆ

Հարաւային Լիբանանի մէջ Հրպայլլայի պետ շէյխ Նապիլ Քաուք երէկ յոյս յայտնեց, որ գերիներու փոխանակման գծով բանակցութիւններ շուտով կը հասնին իրենց աւարտին։
Քաուք իր յայտարարութիւններուն մէջ կոչ ուղղեց յաւելել գոտեպնդման, որովհետեւ շրջանը կը դիմադրուէ վտանգաւոր մարտահրաւերներ։ Ան ցաւ յայտնեց կառավարական վերաբերմունքներուն համար, որոնք չեն օժանդակել յաղթանակին կայունութեան ամրապնդման։

ՄԱՀԱԶԴ

- Օր. Այտա Գարրիէլեան
- Տէր եւ տիկին Րաֆֆի եւ Սիրվա Գարրիէլեան
- Տէր եւ տիկին Ֆիլիպ Մինասեան եւ զաւակունք
- Տիար Արմէն Մինասեան
- Տէր եւ տիկին Լեւոն Մինասեան եւ զաւակունք
- Տիկին Խօսեան Յակոբյան եւ զաւակունք
- Նահիկեան ընտանիք
- Եագուպեան ընտանիք
- Անդրիասեան ընտանիք
- Փափագեան ընտանիք
- Սարգիսեան ընտանիք
- Գալէմեան ընտանիք
- Թիւթիւնճեան ընտանիք
- Տեմիրճեան ընտանիք
- Եւ Համայն ազգականներ կը գուժեն իրենց մօր, քրոջ, մօրաքրոջ եւ Հարազատին

ԱՐՇԱԼՈՅՍ ԶԱՐԵՂ ԳԱՐՐԻԷԼԵԱՆԻ (Ծնեալ՝ ՄԻՆԱՍԵԱՆ)

մահը, որ պատահեցաւ Չորեքշաբթի, 26 Նոյեմբեր 2003ին, կէսօրէ ետք ժամը 4:00ին, իր բնակարանին մէջ, յետ կարճատեւ հիւանդութեան։
Յուզարկաւորութեան արարողութիւնը պիտի կատարուի այսօր՝ Ուրբաթ, 28 Նոյեմբեր, կէսօրէ ետք ժամը 2:00ին, Ս. Նշան Մայր եկեղեցւոյ մէջ, ուրկէ Հանգուցեային մարմինը պիտի փոխադրուի Յըրն Շրպպէ-թի Ազգային գերեզմանատունը։
● Ներկայ ընդունելի իբրեւ մահազոյ։
● Ցաւակցութիւնները կ'ընդունուին հանգուցեային բնակարանը, Սամայի, հանրային պարտեզին ետեւ, «Պատարանի» շէնք, 3րդ յարկ, Ուրբաթ 28, Մարտի 29 եւ Կիրակի 30 Նոյեմբերին։

ՄԱՀԱԶԴ

- Տիկին Գեղեցիկ Պելագուկեան-Շէրնէգեան եւ զաւակունք
- Տիկին Շաքէ Աւետիբեան եւ զաւակունք
- Տէր եւ տիկին Վահագն Պուտուսեան եւ զաւակունք
- Տէր եւ տիկին Սահակ Պետրոսեան եւ զաւակունք
- Տիկին Թահմին Թաշճեան եւ զաւակը
- Տէր եւ տիկին Յակոբ Ասարեան եւ զաւակը
- Պետրոսեան ընտանիք
- Եւ Համայն ազգականներ կը գուժեն իրենց ամուսնոյն, հօր, եղբոր եւ Հարազատին

ԳՐԻԳՈՐ ՇԵՐՆԷՋԵԱՆԻ

մահը, որ պատահեցաւ Երեքշաբթի, 25 Նոյեմբեր 2003ին, յետ կարճատեւ հիւանդութեան։
Յուզարկաւորութեան արարողութիւնը կատարուեցաւ Չորեքշաբթի, 26 Նոյեմբեր 2003ին, կէսօրէ ետք ժամը 3:00ին Նոր Ատանայի Ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ, ուրկէ Հանգուցեային մարմինը փոխադրուեցաւ Պուրճ Համուտի Ազգային գերեզմանատունը։
● Ներկայ ընդունելի իբրեւ մահազոյ։
● Ցաւակցութիւնները կ'ընդունուին հանգուցեային բնակարանը Ամանոս քաղ, Չորեքշաբթի 26, Հիմզաբքի 27 եւ Ուրբաթ 28 Նոյեմբերին։

ՓՈՒՆ ԿԱՐԶԱՊԵՏ ԻՍԱՄ ՅԱՐԵՍԻ ԿՈՉՐ՝ ՆԱԽԱԳԱՎԱԿԱՆ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐՈՒՄ

Փոխ վարչապետ Իսամ Ֆարէս երէկ «Հատատէս» շաբաթաթերթին հետ հարցազրոյցի մը ընթացքին յայտնեց, որ նախագահական թեկնածուներէն կը խնդրէ ծրագիրներ ներկայացնել, որովհետեւ նախագահ Վոր. Էմիլ Լահուտի ծրագիրները բոլորին յստակ են եւ հարկէ նաեւ տեղեկանայ ալոց ծրագիրներուն, որպէսզի ժողովուրդն ու քաղաքական ուժեր անոնց բաղդատութիւնը կատարեն եւ օրին ընտրեն ատակ անձնաւորութիւնը, որ երկիրը պիտի փրկէ իր քառասյիսի վիճակէն։
Ֆարէս նշեց, որ երկրին ընդհանուր կացութեան գոհ չէ, շեշտելով, որ համայնքային, յարաւորական եւ ընկերային օրէնքներն են գլխաւոր պատասխանատուները ստեղծուած այս կացութեան, որ հարկ ունի բարգաւաճման ու արդիականացման։
Ֆարէս ըստ, որ կառավարութեան փոփոխութիւն չի նախատեսուել, բայց յայտնեց, որ «սխալ» մթնոլորտ մը կը տիրէ կառավարութեան կազմին մէջ եւ

կարելի չէ նման ձեռնարկներու հետ, ինչպէս նաեւ չի կրնար ըլլալ, որ երկրին գերագոյն շահերը ըլլան նման կացութիւններու գերին՝ մինչեւ նախագահական նոր ընտրութիւն։

ԵՐԵՍՓՈՒՄԱՆ ՀԱՇՎԵ ԿԸ ԴԱՏԱՊԱՐՏԷ ԲԱՐԳԱՒԱՃՄԱՆ ԵՒ ՎԵՐԱՇԻՆՈՒԹԵԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԻՆ ԳՈՐԾԵԼԱՈՃԸ

Երեսփոխան Ապպա Հաշէմ երէկ դիտել տուաւ, որ ոչ մէկ պատճառ կը տեսնէ նախարարաց խորհուրդի փոփոխութիւն չկատարելու։
Հաշէմ մասնաւորապէս ընթացքին հարց տուաւ, որ արդեօք Բարգաւաճման եւ Վերաշինութեան խորհուրդը խորհրդարանին տեղը կը գրաւէ. ան նկատել տուաւ, որ նշեալ խորհուրդը կը սկսի իր աշխատանքներուն եւ ծրագիրներու գործադրութեան նախքան խորհրդարանի ընդհանուր քարտուղարութեան վաւերացում ստանալը։
Հաշէմ շեշտեց, որ այս երեւոյթը վտանգաւոր է եւ ինքնին մեծ սխալ մըն է։

ԵՐԵՍՓՈՒՄԱՆ ՍԱՅԱՏԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ՓՈՓՈՒՄՈՒԹԻՒՆԸ ԱՆԻՄԱՍՏ ԿԸ ՆԿԱՏԷ

Երեսփոխան Մոհամէտ Սաֆատի երէկ դիտել տուաւ, որ կառավարութեան փոփոխութիւնը ոչ մէկ օգուտ ունի երկրին, եթէ կատարուի անձնակազմի «հաշիւներ մաքրելու» ծիրէն ներս։
Ան ըստ, որ նման պարագայի նախարարաց խորհուրդի փոփոխութեան նպատակը կ'ըլլայ օժանդակել երկրին մէջ տարածուող թունաւոր կացութեան։
Սաֆատի կոչ ուղղեց յանդուգն քայլեր առնելու, որպէսզի Լիբանանի ներքին կեանքին մէջ ստեղծուին դրական պայմաններ՝ կասեցնելու համար քաղաքական եւ տնտեսական վատթարացումը։

**ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՈՌԻԲԵՆ ԶԱՐԴԱՐԵԱՆ
ՄԱՍՆԱՃԻՂԻ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ**

Կը ձեռնարկէ
Դասական երաժշտական
գրոյց հանդիպումներու շարքի մը
Յատկանշական գործերու ունկնդրութեամբ եւ
տեսաերկրագնացութեամբ
Ներկայացնող՝ **Համազգային**
«Բարսեղ Կանաչեան» երաժշտական ընդհի
Դասախօս **ՊՐՆ. ՍԵԼԵՈՆ ՏԵՄԻՐՃԵԱՆ**
Առաջին հանդիպումի միւթ՝
**Ընդհանուր Ներածութիւն Դասական
Երաժշտութեան**
Երկուշաբթի 1 Դեկտեմբեր 2003ին, երեկոյեան
ժամը 7:30ին, «Ազատամարտ» ակումբին մէջ
(Էշրեֆի)։
ԾԱՆՕԹ: Հանդիպումները տեղի կ'ունենան
երկշաբաթեայ դրութեամբ։
ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

**ԳՐԱՒՈՒԱԾ
ՕՐ**

Հ. Յ. Դ.
ԱԶԱՏԱՄԱՐՏ
ԱՎՈՒՄԲ
**ՃԱՇԿԵՐՈՅԹ-
ՊԱՐԱՎԱՆԱԿԵՄ**
27 ՌԵԿՏԵՄԲԵՐ
2003

**ԳՐԱՒՈՒԱԾ
ՕՐ**

ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ
ՊԱՏՐԻԱՐԽԱՆԱՆԻ
Գ. ՀԱՐՊՈՅԵԱՆ
ՎԱՐԺԱՐԱՆԻ
ԵՆՈՂԱԿԱՆ
ՕԺԱՆՂԱԿ
ՄԱՐՄԻՆ
**ԿԱՂԱՆԴԻ
ԽՐԱԽՃԱՆԸ**
18 ՌԵԿՏԵՄԲԵՐ
2003
ԱՌԱՒՕՏԵԱՆ
ԺԱՄԸ 10:30ԻՆ

Կ'ՈՒՂՈՒԻ
Վարպետ ոսկերիչ (ստեղծող) մը: Դիմել՝ հեռ. 01-242549:

**ՀԱՅ ԴԱՏԻ ԴԻՄԱԳՐԱԻԱԾ
ՄԱՐՏԱՀՐԱԻԷՐՆԵՐ**

Կազմակերպութեամբ՝
Հ. Յ. Դ. ԼԵՍԻ «ՀՐԱՅՐ ԴՅՈՒՆԸ» ՄԱՍՆԱՃԻՂԻՆ

Կը բանախօսէ՝ **ԸՆԿ. ՅԱԿՈԲ ԲԱԳՐԱՏՈՒՆԻ**

Մասնակցութեամբ՝
Ազատամարտ Պատանեկան Միութեան
Տեղի կ'ունենայ Կիրակի, 30 Նոյեմբեր 2003ի երեկոյեան
ժամը 7:30ին, «Տիրան Պապիկեան» սրահին մէջ, Էշրեֆի: **ՀՐԱԻԵՐ**

**ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՀԱՅ ԿՐԹԱԿԱՆ
ԵՒ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԵՌՈՒԹԻՒՆ**

**75ԱՄԵԱԿԻ
ՏՕՆԱԿԱՍԱՐՈՒԹԻՒՆ**

Ընդամուրոյութեամբ
Ն. Ս. Օ. Տ. Ս. ԱՐԱՄ Ա. ՎԵՀԱՓԱՆ ՀԱՅՐԱՊԵՏԻ
Կարողիկոս Մեծի Տանն Կիլիկոյ
Տեղի կ'ունենայ Կիրակի, 7 Դեկտեմբեր 2003, առաւօտեան ժամը 11:30ին,
«Յակոբ Տէր Մելքոնեան» հանդիսարանին մէջ: **ՀՐԱԻԵՐ**

ՆԱԽԱՐԱՐ ԱՍԷՄ ՔԱՆՍՕ ԱՆՀՐԱԾԵՇՏ ԿԸ ՆԿԱՏԷ ԶՕՐԱԿՅԻԼ ՆԱԽԱԳԱՀ ԼԱՀՈՒՏԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՒՆ

Պետական նախարար Ասէմ Քանսօ երէկ նկատել տուաւ, որ կառավարութեան փոփոխութիւնը այս հանգրուանին այդքան ալ կարեւոր չէ, որովհետեւ պահանջուածը կայունութիւն եւ հասկացողութիւն, ինչպէս նաեւ երկրին մէջ պարզուած քառասյիս վիճակէն փրկութիւն է, որովհետեւ նաեւ շրջանը փոփոխութիւն չի հանդուրժեր։
Քանսօ շեշտեց, որ արհամաշէտ է նեցուկ կանգնել նախագահ Վոր. Էմիլ Լահուտի բոլոր որոշումներուն ու որդեգրած բոլոր կեցուածքներուն։

**ՏԸ ՄԻՍԹՈՒՐԱ ՄՏԱՀՈԳ՝
ՍԱՀՄԱՆԱՅԻՆ ԽԱԽՏՈՒՄՆԵՐՈՎ**

Հարաւային Լիբանանի մէջ ՄԱԿԻ ընդհանուր քարտուղարի ներկայացուցիչ Սթեֆան Տը Միսթուրա երէկ մտահոգութիւն յայտնեց Կապուտ Գիծին վրայ կատարուող սահմանային խախտումներուն գծով եւ կոչ ուղղեց բոլոր կողմերուն՝ յարգելու ՄԱԿԻ ձգրած իրաքանցեալութեան սահմանագիծը։
Տը Միսթուրա ընդգծեց, որ ֆինիլի ուժերը Լիբանան պիտի մնան եւ պիտի հսկեն խաղաղութեան, մինչեւ իրենց առաքելութեան աւարտը։

ԼՈՅՍ ՏԵՍԱԻ

ԱԶԴԱԿ

ՀԱՅ ԳԱՏԻ ՄԱՐՈՒՐԻ
ԶԱՐԻՔԻ ՀԱՐՈՐ



ՀԱՅԻՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՐԱՒՈՒՄԻ
ՄԱՐՏԻ 2003

Կարելի է ստանալ «Ազգակ»ի ցրուիչներն
եւ գրախանութներն։

ՄԱՀԱԶԴ

Տէր եւ տիկին Վարանդ եւ Կարինէ Ալեքսանտրեան եւ ընտանիք
Տիար Ռոմիկ Նանալանեան
Եւ Համայն ազգականներ կը գուժեն իրենց մօր, անեղբոր եւ մեծ մօր՝

ԱՐՇԱԿՈՒՇԻ ՆԱՆԱՋԱՆԵԱՆԻ (Ծնեալ՝ ԳԱՖԱՅԵԱՆ)

մահը, որ պատահեցաւ Երկուշաբթի, 13 Դեկտեմբեր 2003ին, Լոնտոնի մէջ։
● Ներկայ ընդունելի իբրեւ մահազոյ։
● Հանգուցեային հոգւոյն, հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, 30 Նոյեմբեր 2003ին, Ս. Նշան Մայր եկեղեցւոյ մէջ, յաւարտ Ս. պատարագի։

ՄԱՀԱԶԴ

Տիկին Ազատուհի Սապուհեան եւ զաւակները՝
Նորայր եւ Նայիրի
Տէր եւ տիկին Յակոբ եւ Միրնա Ղազէլեան եւ զաւակունք
Տէր եւ տիկին Յակոբ Սապուհեան եւ զաւակունք
Տիկին Պերճուհի Մամուկեան եւ զաւակունք
Օր. Արմէնուհի Մամուկեան
Տէր եւ տիկին Յակոբ եւ Մարի Թոսունեան եւ զաւակունք

Տէր եւ տիկին Յարութիւն Սամուկեան եւ զաւակունք
Սապուհեան ընտանիք
Մարտոյեան ընտանիք
Յակոբեան ընտանիք
Ղազէլեան ընտանիք
Գալանճեան ընտանիք
Եւ Համայն ազգականներ կը գուժեն իրենց ամուսնոյն, հօր, մեծ հօր, քեռայրին, քենեկային եւ Հարազատին՝

ՅԱԿՈԲ ՍԱՊՈՒՆՃԵԱՆԻ (Ծնեալ՝ Հալէպ, 1939ին)

մահը, որ պատահեցաւ Երեքշաբթի, 25 Նոյեմբեր 2003ին, յետ երկարատեւ հիւանդութեան, Աթէնքի մէջ։
Յուզարկաւորութեան արարողութիւնը կատարուեցաւ Հինգշաբթի, 27 Նոյեմբերին, Աթէնքի Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ մէջ։
● Ներկայ ընդունելի իբրեւ մահազոյ։

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ԸՆԴՈՒՆԵՑ ՓԱՂԱՆԳԱՌՈՐ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ ՊԱՏՈՒԻՐԱԿՈՒԹԻՒՆԸ

Հինգշաբթի, 27 Նոյեմբեր 2003ին, Ն. Ս. Օ. Տ. Սրամ Ա. կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիոյ, վեհարանին մէջ ընդունեց Փաղանգաւոր Կուսակցութեան քաղաքական գրասենեակի ներկայացուցիչներէ բաղկացած պատուիրակութիւնը:

Պատուիրակութեան անդամները տեղեակ պահեցին վեհափառ հայրապետը յառաքիկային իրենց կազմակերպելիք համագումարին առընչութեամբ եւ խօսեցան անոր օրակարգի հարցերուն մասին:

Վեհափառ հայրապետը իր կարգին շեշտեց կուսակցութիւններու միջեւ գործակցութիւն յառաջացնելու կարեւորութիւնը, Լիբանանի պետականութիւնը ամրապնդելու անհրաժեշտութիւնը եւ փոխադարձ վստահութեան վերականգնումը:

ՀԱՅԿԱԶԵԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻՆ ՄԷՉ

ՀԱՆԴԻՊՈՒՄ՝ «ՊՈՒՐԸ ՀԱՍՈՒՏԻ ԶՏԱՐԱՆԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՎԵՐՋԻՆ ԻՐԱԴԱՐՁՈՒԹԵԱՆՑ ԼՈՅՍԻՆ ՏԱԿ» ԹԵՄԱՅՈՎ

Պուրճ Համուտի մէջ մինչեւ 2007 թուական կառուցուելիք կոյուղիներու պտարանի ծրագրին առնչութեամբ վերջին իրադարձութիւններուն եւ ի մասնաւորի՝ ԷՍՔՈՒԱԻ մէջ Բարգաւաճման եւ Վերակառուցման Խորհուրդին հրահրած հանդիպումին լոյսին տակ, Չորեքշաբթի, 26 Նոյեմբերի երեկոյեան ժամը 8:00ին, Հայկապետան Համալսարանի հանդիսարանին մէջ վերոյիշեալ ծրագրին նկատմամբ կեցուածք որդեգրելու կոչուած խորհրդատու յանձնախումբը իրաւորած էր մասնագիտական մակարդակի հանդիպում մը:

Հանդիպումին ներկայ կը գտնուէին Հայկապետան Համալսարանի նախագահ վեր. դոկտ. Փօլ Հայտնութեան, Պուրճ Համուտի քաղաքապետ Անդրանիկ Մարտիան եւ քաղաքապետական խորհուրդի անդամներ, ճարտարարուեստի մարպի ներկայացուցիչներ, կրթական պատասխանատուներ, ուսուցիչներ, ակադեմիականներ, շրջանին մէջ գործող այլպէս միութիւններու ներկայացուցիչներ եւ տարբեր մարպերու մասնագէտներ:

Խորհրդատու յանձնախումբին անունով հանդիպումին բացուր կատարեց ճարտարապետ Արփի Մանկասարեան, որ խօսեցաւ Բարգաւաճման եւ Վերակառուցման Խորհուրդի ծրագրին մասին, շեշտելով, որ անիկա Պուրճ Համուտի շրջանին համար անընդունելի է: Ան նաեւ խօսեցաւ ԷՍՔՈՒԱԻ հանդիպումին ընթացքին Պուրճ Համուտը ներկայացող պանապան ընկերակցութիւններու այս գծով արտալայտած միահամուռ կեցուածքին, վերոյիշեալ հանդիպումին ետք նախատեսուած լայնածիր պորաշարժի աշխատանքներուն եւ հանդիպումներուն մասին: Արփի Մանկասարեան կարդաց նաեւ այս առիթով մամուլին մէջ լոյս տեսած ընդարձակ յայտարարութիւնը:

Այնուհետեւ ներկայներուն առիթ տրուեցաւ արտալայտելու իրենց կարծիքները օրակարգի հարցին կապակցութեամբ: Անոնք իրենց մեծամասնութեամբ «ոչ» ըսին այս պտարանի կառուցման ծրագրին, այնպէս ինչպէս որ ան կ'առաջադրուի Բարգաւաճումի եւ Վերակառուցման Խորհուրդին կողմէ:

Նաեւ նշուեցաւ, որ պէտք չէ ամբողջականօրէն մերժողական կեցուածք որդեգրել պտարան մը կառուցելու ծրագրին նկատմամբ, բայց ո՛չ թէ այնպիսի պտարան մը, որ ծառայէ ընդարձակ շրջանի մը, պտարան մը, որ կենսոլորտային եւ առողջապահական մակարդակներու վրայ ոչ մէկ երաշխիք կը ներկայացնէ Պուրճ Համուտի բնակչութեան:

Մասնակիցները նկատել տուին, որ պէտք է այս գծով հասարակական պորաշարժ եւ քարոզչական լայնածիր արշաւ մը տարուի Մեթնի բնակչութեան կողմէ, եւ այս՝ շատ արագ, որովհետեւ վերոյիշեալ պտարանին կառուցման գործադրութեան մասնակցող կապալառուներուն կողմէ նուազուրդի թղթածրարներուն ներկայացման պայմանաժամը կ'աւարտի 14 Գեկտեմբերին, եւ մինչ այդ անհրաժեշտ է այս կապակցութեամբ քայլերու ձեռնարկել: Շեշտուեցաւ նաեւ, որ այս գծով որեւէ նախաձեռնութեան մը մէջ հիմնական դերակատարութիւն ունի Պուրճ Համուտի քաղաքապետութիւնը:

Շ. Մ. Ը. Մ.Ի ՊԱՂՏԱՏԻ ՄԱՍՆԱԾԻՂԸ ԿԸ ՎԵՐԱՄԻԱՆԱՅ ՍԻՈՒԹԵԱՆ ԸՆՏԱՆԻՔԻՆ

Քաղաքական ծանօթ պայմաններու բերումով, աւելի քան 35 տարի միութեան կազմակերպական կառոյցին մաս չկապմելէ ետք, Շ. Մ. Ը. Մ.Ի Պաղտատի մասնաճիւղը երէկ վերամիացաւ միութեան մեծ ընտանիքին, դառնալով անոր 91րդ մասնաճիւղը:

Վերամիացումի յայտարարութիւնը կատարուեցաւ երէկ յետմիջօրէին, Շ. Մ. Ը. Մ.Ի Կեդրոնական վարչութեան Պուրճ Համուտի կեդրոնատեղիին մէջ կազմակերպուած պաշտօնական արարողութեան մը ընթացքին, որուն ներկայ գտնուեցան Շ. Մ. Ը. Մ.Ի ներկայ եւ նախկին Կեդրոնական վարչութիւններու անդամներ, Լիբանանի Շրջանային վարչութեան անդամներ եւ այս օրերուն Լիբանան այցելող իրաքահայ Շ. Մ. Ը. Մ.Կանաներու 18 հոգինոց պատուիրակութիւնը:

Վերամիացումի յայտարարութիւնը կատարեց Շ. Մ. Ը. Մ.Ի Կեդրոնական վարչութեան ատենապետ էղբ. Գառնիկ Մկրտիչեան: Այս առիթով, Շ. Մ. Ը. Մ.Ի նախկին եւ ներկայ Կեդրոնական վարչութիւններու անդամներ Քիւլանդ Թորիկեան, Կարօ Թիրիւնճեան եւ Ստեփան Տէր Պետրոսեան պատուիրակութեան պաշտօնապէս յանձնեցին միութեան դրօշը, սկաւտական դրօշը եւ կանոնագիրը: Կատարուեցաւ նաեւ յուշանուէրներու փոխանակում:

Նշենք, որ պատուիրակութիւնը Լիբանան կը գտնուի 6 օրէ ի վեր: Երեքշաբթի եւ Չորեքշաբթի պատուիրակութեան անդամները լսեցին երեք դասախօսութիւններ եւ այցելեցին Լիբանանի Հայոց Թեմի առաջնորդարան եւ հայրական անոր օրհնութիւնը ստանալէ ետք՝ ճաշի հիւրը դարձան առաջնորդ Գեղամ Եպս. Խաչերեանին: Անոնք այցելեցին նաեւ Շ. Մ. Ը. Մ.Ի Անթիլիասի եւ Ժրտէյտէի մասնաճիւղերու ակումբներ եւ մասնաճիւղերու վարչութիւններուն հետ հանդիպումներէ ետք՝ երեկոները դարձան անոնց հիւրերը: Չորեքշաբթի, պատուիրակութիւնը այցելեց Այնճար եւ ծանօթացաւ հայաւանի ապային կառոյցներուն եւ Շ. Մ. Ը. Մ.Ի մասնաճիւղին:

Երէկ, պատուիրակութեան անդամները լսեցին երկու դասախօսութիւններ եւ կէսօրին այցելեցին ԼՕՍԻ ընկերաբժշկական կեդրոն, ուր ճաշի հիւրը եղան ԼՕՍԻ Շրջանային վարչութեան: Երեկոյեան, անոնք Շ. Մ. Ը. Մ.Ի Պուրճ Համուտի մասնաճիւղին հետ տողանցեցին քաղաքապետարանի հրապարակին շուրջ, ապա մասնակցեցան Լեւոն եւ Սոֆիա Յակոբեան քոլէճի շրջափակին մէջ կազմակերպուած խարուկահանդէսին: Աւելի ուշ, անոնք ընթրիքի հիւրը եղան Շ. Մ. Ը. Մ.Ի Պուրճ Համուտի մասնաճիւղին:

Այսօր, պատուիրակութեան անդամները կը շարունակեն սեմինարի իրենց աշխատանքները եւ կը լսեն երկու դասախօսութիւն: Երեկոյեան, անոնք աշխատանքային հանդիպում մը կ'ունենան Շ. Մ. Ը. Մ.Ի Լիբանանի Շրջանային վարչութեան հետ, որուն ընթրիքի հիւրը կ'ըլլան աւելի ուշ: Պատուիրակութիւնը Լիբանան կը մնայ մինչեւ Երկուշաբթի:

ԼՕՍԻ. «ԿԱՐՍ» ՄԱՍՆԱԾԻՂ

ՀԱՅ ԿՆՈՋ ԴԵՐԻՆ ՆՈՒԻՐՈՒԱԾ ԴԱՍԱԽՕՍՈՒԹԻՒՆ ԵՒ ՄՏԵՐՄԻԿ ՆԱԽԱԾԱՇ

ԼՕՍԻ «Կարս» մասնաճիւղի վարչութեան կազմակերպութեամբ, երէկ, Հինգշաբթի, 27 Նոյեմբերի առաւօտեան ժամը 10:00ին, «Ա Վ ա տ մ ա Ր տ» ակումբի «Չոխատարեան» սրահին մէջ տեղի ունեցաւ նախաձեռնի ձեռնարկ մը, որուն ընթացքին ներկայացուցան հայ կնոջ դերակատարութեան նուիրուած դասախօսութիւն մը:

Օրուան դասախօսն էր Շաքէ Եագուպեան, որ յուսարձակի տակ առաւ բոլոր ժամանակներուն կնոջ եւ յատկապէս հայ կնոջ ունեցած դերակատարութիւնը ընկերութեան եւ ընտանիքին մէջ:

Հայ կին կերպարին մասին խօսելով, ան սկսաւ նախաքրիստոնէական ժամանակներէն:

նշեցաւ ժամանակներէն՝ կին Աստուածուհիներէն եւ ապա մէջբերումներ կատարեց մեծ բանաստեղծներու եւ մտաւորականներու կողմէ կնոջ ու մօր ձեռնարկ տողերուն եւ անոնց մասին կատարուած արտայայտութիւններէն:

Մարդկային կեանքին մէջ կնոջ նկարագրին եւ առանձնալատկութիւններուն ակնարկելով Շ. Եագուպեան դիտել տուաւ, թէ կինը պէտք է գիտակցի իր կարողութիւններուն, ընտանիքին նկատմամբ ունեցած պարտաւորութիւններուն եւ ընտանիքին մէջ:

Պիտանք Մարկոսեանի մահուան առիթով, ԼՕՍԻ Շրջանային վարչութեան կատարուած են տեսեալ նուիրատուութիւնները:

Տը եւ տիկին Շմաւոն Բելլեյեան 50,000 լ. ո., տը եւ տիկին Գեորգ Փոլատեան 50,000 լ. ո., տը եւ տիկին տոքթ. Վիգն Գայրանճեան 50 տոլար, տը եւ տիկին Սիմոն Գայրանճեան 50 տոլար եւ ԼՕՍԻ Շրջանային վարչութեան ընկերուհիներ 100,000 լ. ո.:

USUSԱՆԸ
«ԳՈՐԾՆԱԿԱՆ ՈՒՂԵՑՈՅՑ ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ» ԼԻԲԱՆԱՆ
Շրտարակութիւն՝
ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ
2003

ԹՈՒՆԻ ԽԱԼԻՅԷ՝
«ՎԱՆԱՅ ԶԱՅՆ»ԷՆ
Պատկերասփիւռի LBC կայանի հանրաճանօթ խօսնակ եւ յայտագիրներու հաղորդակար թՈՒՆԻ ԽԱԼԻՅԷ Երեքշաբթի, 27 Նոյեմբեր 2003, կէսօրէ ետք ժամը 3:00ին պիտի պատասխանէ ՀԱՍԱ ԸՍՏԱՏԻ հարցումներուն՝ Շաբաթ երեկոյեան պատկերասփիւռող իր յայտագիրին, ընտրուած հիւրերուն եւ ԼԵԲԸՆ հեռանայլու մասին շրջան ընդ շուրջներուն վերաբերեալ:

3ԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ
Լիբանանում Հայաստանի Հանրապետութեան դեսպանութիւնը
Եւ
Լիբանանում Հայաստանի Շրջանաւարտների Միութիւնը
Սիրով հրաւիրում են ներկայ գտնուելու համերգի՝ նուիրուած 1988թ. Դեկտեմբերի 7ին Հայաստանում տեղի ունեցած աւերիչ երկրաշարժի 15ամեակին՝ կատարմամբ հայրենի տաղանդաւոր երիտասարդ երաժիշտներ՝
ԱՐՈՒՍ ԱՃԵՍԵԱՆԻ (դաշնամուր)
Եւ
ՍԵՐԳԷՅ ՍՄԲԱՏԵԱՆԻ (ջութակ),
որը տեղի կ'ունենայ Հինգշաբթի, 4 Դեկտեմբերի, 2003թ., ժամը 20:00ին - Assembly Hall- AUB,
Տոմերը վաճառու են՝
●Virgin Megastore- Downtown
●«Երեւան» խանութ - Պուրճ Համուտ
●«Համազգային» գրախանութ - Պուրճ Համուտ
●«Տօնկեան» գրախանութ - Մար Սըխայլ
Համերգից գոյացած ամբողջ հասոյթը տրամադրուելու է Գիւմրիում մշակութային ծրագրերի իրագործման համար:
Ծրագրում կը հնչեն Բաբաջանեանի, Շոպենի, Ռախմանինովի, Ռաւելի եւ այլ նշանաւոր կոմպոզիտորների ստեղծագործութիւններ:
27 Նոյեմբեր 2003թ.
ՀԱՅԱՍՏԱՆԻ
ԳԵՏԱՊԱՆՈՒԹԻՒՆ ԼԻԲԱՆԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ԶԵՆԱԳՈՐԾՆԵՐՈՒ ԶՈՒՅԱՎԱՆԴԵՍ
Հովանաւորութեամբ՝
ԼՕՍԻ ՇՐՋԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ
Կազմակերպութեամբ՝
ԼՕՍԻ ԶԵՆԱՐՈՒԵՍԻ ԶԱՆՁԱԽՈՒՄԻՒՄԻ
Նախագահութեամբ՝
ՏԻԿԻՆ ՎԱՐԴՈՒԷՏԻ ՏԵԼԵՐՄԵՆՃԵԱՆԻ
Բացում՝ Շաբաթ, 29 Նոյեմբեր 2003
Կ. Ե. ժամը 5:00ին, «Hotel Promenade»,
Չալքա Յուցահանդէսը կը շարունակուի մինչեւ Կիրակի, 14 Դեկտեմբեր 2003 ներառեալ, ամեն օր ժամը 10:00էն մինչեւ երեկոյեան ժամը 7:00:
ԵՐԱԷՐ

Ս. ՅԱԿՈԲ ԵԿԵՂԵՑԻ
ԷՆՐԵՑԻԷ
Ս. ՅԱԿՈԲԻ ՏՕՆԱԽՄԲՈՒԹԻՒՆ
Այս տարի, Ս. Յակոբ Մծբնայ հայրապետի անուանակցութեան տօնը Շաբաթ, 13 Դեկտեմբեր 2003ին է: Այս առիթով տեղի պիտի ունենան հոգեւոր եւ ազգային բնոյթով սոցալմարտութիւններ: Դարձեալ պիտի պատրաստուի աւանդական «հերիսան»:
Մեր ժողովուրդի գաւակներէն անոնք, որոնք կը փափաքին այս առիթով մատաղցու ոչխար կամ փոխան ոչխարի նուիրատուութիւն կատարել, թող բարեհաճին կապ հաստատել քաղաքապետութեան գրասենեակը՝ ամեն առաւօտ ժամը 8:30էն 12:30: Եւն. 01-449926:
ԹԱՂԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ
Ս. ՅԱԿՈԲ ԵԿԵՂԵՑԻՈՅ

3ԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ
Հովանաւորութեամբ
ԳԵՐՉ. Տ. ԳԵՂԱՄ ԵՊՍ. ԽԱՉԵՐԵԱՆԻ
(Առաջնորդ Լիբանանի Հայոց Թեմի)
ՀՈԳԵՒՈՐ
ԴԱՍԱԽՕՍՈՒԹԻՒՆ
Այսօր՝ Ուրբաթ, 28 Նոյեմբեր 2003, երեկոյեան ժամը 6:00ին, Ս. Նշան Մայր եկեղեցույ մէջ:
Դասախօս՝
ԴՈԳԵՆ. Տ. ՄԱՇՏՈՅ ՎՐԴ. ԶՈՊԱՆԵԱՆ
Սիւր՝
«ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉԻ ԲԱԺԻՆՆԵՐԸ»
Սիրով կը հրաւիրենք մեր հաւատացեալները:
ԹԱՂԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ
Ս. ՆՅԱՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ

ASHJIAN TOURS
Բացառիկ շրջապտոյտներ. Երեւան 22-29 Դեկտեմբեր
Ա. կարգի պանդոկ, 5 օրեւ տարբեր պտոյտներով, զին, փոխան 5755ի՝ միայն 2955:
Հայաստան երթ ու դարձի տոմս, ARMAVIA ընկերութիւն, Հայկապետ՝ 115: Տոմսերը կարելի է ստանալ Աշեան Թուրքի, ունիւնք նաեւ վարձու տուներ Հայաստանի մէջ:
Սի՝ մոնոք Սոր Տարին անցնելու Կիպրոսի մէջ լման պտոյտներով 30 Դեկտեմբերէն 2 Յունուար 2385 սկսեալ:
CYPRUS AIRWAYS
Այս Կիրակի, 30 Նոյեմբեր միօրեայ պտոյտ Դամասկոս Մաալուլա զին միայն 125 կտորուան ճաշ խրախանով 205:
Արձանագրութիւն՝ Աշեան Թուրք 01-240654, 261177 եւ 03-233978:
●Կը վաճառենք շատ աման գինով օդանաւի տոմսեր:

ՀԱՄԱԶԳԱՅԻՆԻ ԼԻԲԱՆԱՆԻ
ՇՐՋԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ
ԹԱԹՍ
ԼԻԲԱՆԱՆԻ ՄԷՋ
5 ՅՈՒՆՈՒՄ 2004 ՃԱԿԵՐՈՅՈՒՄ - ԿԱՐԱՎԱՆԴԵՍ
6 ՅՈՒՆՈՒՄ 2004 ԵՐԳԱՎԱՆԴԵՍ



«Դրոշակ» ի հարցազրույցը Ընկերվար Միջազգայնականի մաս Ղաշնակցու-թեան Գերագույն-ացուցիչ Ը.Յ.Դ. Բիրոյի անդամ Ընկեր Սարիօ Նալպանտեանի հետ

«ԴՐՈՇԱԿ»- Ինչպես կ'արժեքները Ընկեր-վար Միջազգայնականի Համաշխարհային Հա-մաժողովի կողմից Դաշնակցութեան լիիրաւ անդամի կարգավիճակին պաշտօնակաճ հաս-տակգրումը:

ՄԱՐԿՈ ՆԱԼՊԱՆՏԵԱՆ.- Ընկերվար Միջազ-գայնականի վերջին համաժողովին կողմից լի-րաւ կարգավիճակով Դաշնակցութեան վերըն-դունումը կու գար պարզաբերու պատմական այն սխալը, որ անցեալ դարու երկրորդ կիսու սկիզբները, իբրեւ կառուցային եւ կանոնադրա-յին փոփոխութիւն, միջազգային այս կարեւոր կազմակերպութիւնը գործեց ուրիշներու կար-գին, նաեւ Դաշնակցութեան ու Հայ ժողովուրդ-դին նկատմամբ:

Երբ Բ. Աշխարհամարտէն ետք, 1951ին, Յրանքֆորթի մէջ Ընկերվար Միջազգայնակա-նը իր համաժողովը կը գումարէր՝ պատերազմի իրենց անդամ կուսակցութեանց միջեւ յա-ռաջացած հակամարտութեանց հետեւանք վեր-քերը դարմանելու, ինչպէս նաեւ՝ ինքզինք վե-րագտնելու եւ վերաշխուժանալու ճամբով նոր երթ մը սկսելու նպատակով, շատ արագ դրեւ-տրուեցան շարք մը բացասական երեւոյթներ-այս վերջիններու շարքին՝ սեփական երկրի մէջ կամ հայրենի հողի վրայ չգործող կուսակցու-թիւնները զրկուեցան լիիրաւ անդամի իրենց կարգավիճակէն:

Ը-Մ-ի այդ որոշումին դէմ բողոքի կեցուածք որդեգրելով՝ օրուան Հ.Յ.Դ. Բիրոն ստեղծեց կուսակցութեան անդամակցութիւնը Միջազ-գայնականին: Սակայն արագօրէն այդ դիրքո-րոշումը վերանայելու եկաւ Վիեննայի մէջ գու-տումած Հ.Յ.Դ. 20րդ (1972) Ընդհանուր ժողով-ը, որ յատուկ բանաձեւով կը յանձնարարէր նո-րընտիր Բիրոյին՝ վերադառնալ Ը-Մ-ի անդա-մակցութեան:

Յաջորդ տարիներուն եւ քանի մը քառամ-եակ, իրերայ շարքի Բիրոները գործեցին համա-ձայն այդ յանձնարարութեան, մինչեւ որ երեք հանգրուաններով իրագործուեցաւ լիիրաւ կար-գավիճակով Դաշնակցութեան անդամակցու-թեան վերականգնումը Ընկերվար Միջազգայ-նականին մէջ:

Առաջին հանգրուանը իրագործուեցաւ Սեպ-տեմբեր 1996ին՝ Նիւ Եորքի մէջ կայացած Ը-Մ-ի Համաշխարհային Համաժողովին, որ դիտորդի կարգավիճակով վերականգնեց Հ.Յ.Դ-ի անդա-մակցութիւնը: Երկրորդ տեղի ունեցաւ Ը-Մ-ի յաջորդ Համաշխարհային Համաժողովին, գու-մարուած Փարիզի մէջ Նոյեմբեր 1999ին, ուր ստացանք խորհրդակցական անդամի կարգավի-ճակ: Երրորդ եւ վճռահատող հանգրուանը յա-նդողութեամբ պսակուեցաւ այս տարուան Հոկ-տեմբերին, երբ Սան Փաուլոյի մէջ գումարուած իր Համաշխարհային Համաժողովին Ընկերվար Միջազգայնականը պաշտօնապէս հաստատեց Դաշնակցութեան լիիրաւ անդամի կարգավիճակ տալու Ը-Մ-ի խորհուրդի որոշումը, որ տրուած էր 2002ի Յունիսիսի, Քազապլան-քայի մէջ (Մարտ):

«Դ.»- Վերանդամակցութեան աշխատանքները ի՞նչ դժուարու-թիւններու բախտեցան, որ այսքան ժամանակ պէտք եղաւ անոնց յաղ-թահարման համար:

Մ.- Ն.- Անշուշտ նախ կար Ը-Մ-ի բացասական վերաբերումը այն կուսակցութեան նկատմամբ, որ կառուցային եւ կանոնադրային ընդհանուր փոփոխութեան չընդա-ռաջելով՝ որոշած էր դուրս գալ Միջազգայնականէն: Բայց կային նաեւ այլ՝ առարկայական կամ գործնական արգելքներ: Տեղ մը կար այն հարցականը, թէ Հ.Յ.Դ. որքանով հաւատարիմ մնացած էր Ընկերվարական գաղափարա-նութեան: Այլուր՝ Հայ Դատի հե-տապնդման աշխատանքներուն մէջ Դաշնակցութեան գործուն դե-րակատարութեան իբրեւ հետե-ւանք, եւրոպական որոշ պետու-թիւններու եւ անոնց ընկերվարա-կան կուսակցութեանց կողմէ բա-ցասական կեցուածք գոյութիւն ունէր: Վերջապէս արհամարհելի էր Ը-Մ-ի լիիրաւ անդամ թրքա-կան կուսակցութեանց կողմէ եւ անոնց դաշնակիցներու գորակցու-թեամբ դրուած արգելքը Դաշնակ-ցութեան վերանդամակցութեան դէմ:

Սակայն 70ականներու վերջե-րուն եւ 80ականներու սկզբնաւո-րութեան կատարուած հետեւողա-կան, լուրջ եւ բացատրական ճիգե-րու արդիւնքով՝ Ընկերվար Մի-ջազգայնականի ատենի եւրոպա-

«ԴԱՇՆԱԿՅՈՒԹԵԱՆ ԳԼԽԱՒՈՐ ԳՈՐԾԸ ՄԵՐ ԺՈՂՈՎՈՒՐԴԻ ԱՆԻՐԱՒՈՒԱԾ ԽԱՒԵՐՈՒՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹԻՒՆՆԵ Է»

կան հիմնական դեկավարները (Օլաֆ Փալմէ, Պրուէօ Քրոյաքի, Յրանուա Միթերան) նպաս-տաւոր գետին մը ստեղծեցին մեր կուսակցու-թեան վերանդամակցութեան համար: Այդ նպաստաւոր միջավայրին մէջ Հ.Յ.Դ. կրցաւ իր քարոզչութիւնը շարունակել ու ճիշդ բացատրել եւ հիմնաւորել իր վարած քաղաքականութիւնն ու գաղափարական պատկանելիութիւնը:

Անշուշտ որ Հայաստանի վերանկախացումը եւ Դաշնակցութեան կազմակերպական վերա-դարձը մար հայրենիք անկիւնադարձային մէկ նոր հանգրուան բացին ընդհանրապէս մեր կու-սակցութեան գործունէութեան եւ յատկապէս այն աշխատանքներուն առջեւ, որոնք կը տար-ւէին Ը-Մ-ի մէջ մեր լիիրաւ վերանդամակցու-թիւնը ապահովելու ուղղութեամբ: Եւ այդ թուականներուն, որքան որ ալ թուրքերոյ կամ թուրքերու եւ ազերիներու կողմէ (ինչու ոչ նա-եւ Լեւոն Տէր Պետրոսեանի վարչախումբին կող-մէ Ը-Մ-ի դեկավարութեան մօտ Դաշնակցու-թեան նկատմամբ բացասական վերաբերում յա-ռաջացնելու միջամտութեամբ) փորձ կատար-ւեցաւ խափանելու Հ.Յ.Դ-ի վերանդամակցու-թեան ընդունումը, ինչպէս նաեւ՝ խանգարելու Դաշնակցութեան եւ Ը-Մ-ի կեդրոնին միջեւ յա-րաբերութեանց բնականոնացումը, այսուհան-դերձ փաստը կը մնայ փաստ, եւ այսօր Հ.Յ.Դ- լիիրաւ անդամի կարգավիճակով վերամիացած է Միջազգայնականին՝ հանդիսանալով նման կարգավիճակ ունեցող միակ կուսակցութիւնը ԱՊՀ տարածքին:

Ամէն պարագայի, Դաշնակցութիւնը այսօր կը վայելէ Ընկերվար Միջազգայնականի բոլոր կուսակցութեանց յարգանքը, մանաւանդ Կեդ-րոնական եւ Արեւելեան Եւրոպայի շրջաններուն մէջ կը հանդիսանայ ամէնէն լուրջ եւ հաւատա-րիմ ներկայացուցիչը Ընկերվար Միջազգայնա-կանի:

«Դ.»- Հ.Յ.Դ-ի վերանդամակցու-թիւնը դժուարացնող գործոցներու շարքին Ընկերվար, թէ ժամանակին կըրայ ճիշդ հարցակցը, թէ Դաշ-նակցութիւնը որքանով վաւաստարիմ մնացած էր ընկերվարական գաղափարաբանութեան: Հիմք ունէ՞ր այդ հարցակցը:

Մ.- Ն.- Պարզ է, որ որոշ ժամանակաշրջան մեր կազմակերպութեան մէջ գաղափարական-գա-ղափարախոսական հարցերը մոռուեցան երկրորդ հարթութիւն եւ նախապատուութիւն տրուեցաւ ազգային-քաղաքական օրակարգին: Յատկապէս Պաղ պատերազմի տարիները այդպիսին էին եւ միջազգային տարրութեամբ գաղափարական բեւեռներու յառաջացման ու սրման ժամանակ մեր կուսակցութիւնը հեռու մնաց չընտանքիցն գաղափարաբանական դիրքեր զբաւել:

Այդպէս եղաւ, որովհետեւ օրուան պահանջը ուրիշ էր: Բայց Հ.Յ.Դ- միջո մնաց հաւատարիմ իր գաղափարաբանութեան եւ ատոր ամէնէն խօսուն ապացոյցը եղաւ Հ.Յ.Դ-ի 20րդ Ընդհա-նուր ժողովին յանձնարարութիւնը Հ.Յ.Դ-ի Բիրոյին՝ ոչ մէկ ճիգ խնայելու, որպէսզի Դաշ-նակցութիւնը վերադառնալ Ընկերվար Միջազ-գայնականի շարքերը: Նոյն Ընդհ. ժողովը, միա-ժամանակ, յետ յիսուն տարուան անշարժու-թեան, որոշեց աշխուժօրէն ձեռնարկել Հ.Յ.Դ-ի Ծրագրի վերամշակման ու այժմէականացման

աշխատանքին՝ վստահ ըլլալով, որ Հ.Յ.Դ. շար-քերուն մէջ պահպանուած էր պորտակապը Դաշ-նակցութեան գաղափարաբանութեան հետ:

«Դ.»- Կեդրոնացնելով Երկրային վրայ՝ Ըն-կերվար Միջազգայնականի մէջ լիիրաւ ան-դամի կարգավիճակով Դաշնակցութեան վե-րընդունումը ի՞նչ կու տայ ճիշդ Ընկերվար մեր կուսակցութեան, ապա, լայն ընդգրկումով, Հայաստանին ու Հայ Դատին:

Մ.- Ն.- Գիտէք, որ Ընկերվար Միջազգայնա-կանը այսօր կը համարուի աւելի քան 170 կու-սակցութիւն՝ աշխարհի բոլոր ցամաքամասե-րէն: Լիիրաւ անդամի կարգավիճակով Դաշնակ-ցութեան վերընդունումը նախ կը նշանակէ մեր կուսակցութեան նկատմամբ աշխարհի ամէնէն տարածուն եւ զօրաւոր քաղաքական կազմա-կերպութեան կողմէ յստակ զօրակցութիւն:

Կը նշանակէ, նաեւ, որ լիիրաւ անդամ իր երկրին մէջ կայացած կուսակցութիւն է, որուն կառույցը կը համապատասխանէ ծրագրային նպատակներուն՝ մնալով հաւատարիմ նոյն այն գաղափարաբանութեան ընկերվարութեան, որ իրեն ծնունդ տուած է:

Նոյնքան կարեւորութեամբ պէտք է նշել, որ լիիրաւ անդամի կարգավիճակը Դաշնակցու-թեան կու տայ իրաւասութիւնը հաւասար դիր-քերէ յարաբերելու աշխարհի մեծ ու ազդեցիկ երկիրներու Ընկերվարական կուսակցութեանց հետ, որոնք եղած են կամ այժմ ալ կը գտնուին իշխանութեան գլուխը:

Այս յարաբերութեանց ընդմէջէն կարելի է ակնկալել, որ մենք կը կարենանք Հայաստանի Հանրապետութեան համար ստեղծել առաւելու-թիւններ՝ քաղաքական, տնտեսական թէ՛ այլ մարզերու մէջ: Նոյնը՝ Հայ Դատի հետապնդման աշխատանքներուն վերաբերեալ, որովհետեւ Դաշնակցութեան ձայնը լսելի դարձնելու հնա-րաւորութեան շնորհիւ՝ մենք կը յաջողինք մի-ջազգային տարբեր բեմերու վրայ կամ միջկու-սակցական երկխոսութեանց ընթացքին արծար-ծել ու պաշտպանել մեր պետութիւնն ու ժողո-վուրդը յուզող հիմնահարցերը:

«Դ.»- Այդ նամբուն վրայ ի՞նչ մարտահրա-ւերներ կը դիմագրաւէ Դաշնակցութիւնը այ-սօր՝ թէ՛ իբրեւ Ընկերվար Միջազգայնականի լիիրաւ անդամ, թէ՛ իբրեւ Հայաստանի քաղա-քական բեմին վրայ գործող կաբեւոր ուժ:

Մ.- Ն.- Այսօր յաւելելով պապասխանատու-թիւնը կը գրանք՝ մեր երկրին մէջ քաղաքական դաշտի կայունութիւնը պահպանելու գործին մէջ: Ասիկա մէկ կողմէ կը նշանակէ մեր կեց-ւածքով, գործելակերպով եւ հրապարակային ելոյթներով նպաստել կայունութեան ու ժո-ղովրդավարութեան հաստատման եւ խորաց-ման. պարզ խօսքով՝ նպաստել երկրի կառավա-րելիութեան: Միւս կողմէ՝ իբրեւ կուսակցու-թիւն մը, որ լիիրաւ անդամ է ընկերային ար-դարութեան հետապնդող Ընկերվար Միջազգայ-նականի, մեզ կը պարտաւորեցնէ զօգն ըլլալ, որ-պէսզի երկրին տնտեսական-ընկերային պայ-մանները չընթան աւելիով սրելու ժողովուրդի շերտերուն միջեւ արդէն իսկ առկայ բեւեռա-ցումը:

Այս առումով Դաշնակ-ցութեան համար կարեւոր մարտահրաւէր է, Հայաս-տանի մէջ, ծրագրային հե-տեւողականութեամբ լծուիլ արդարութեան գե-րակայնութիւնը իբրեւ ան-փոփոխելի արժէք ամ-րապնդելու գործին: Եւ ին-չո՞ւ էլ, նաեւ, իբրեւ Ըն-կերվարական կուսակցու-թիւն, փորձել իր շուրջ հա-մախմբել նոյն նպատակնե-րը հետապնդող կուսակ-ցութիւններն ու խմբաւո-րութեանը: Հայաստանի դիմագրաւած ընկերային-տնտեսական ստր տագնա-պը միայն մէկ կուսակցու-թեան ճիգերով ու աշխա-տանքներով կարելի է չէ դարմանել, այլ՝ համատեղ աշխատանքով մասնաւոր արդարութեան եւ հաւա-սարութեան համար պայ-քարող գաղափարակից կուսակցութիւններու:

«Դ.»- Արդարութեան եւ հաւասարութեան հե-տապնդումը, այսօրուան Ընդհանուր ժողովի համաշ-խարհային իրականու-թեան մէջ, տարբեր ուղի-ներու եւ ուղղութիւննե-րու առջեւ դրած է ողջ մարդկութիւնը: Այս առումով՝ ո՞ր կանգնած է Երկրային Ընկերվար Միջազգայնականը եւ այդ ղիտակիւնէն՝ ո՞ւր կը տեսնէք անոր լիիրաւ ան-

դամի կարգավիճակ ունեցող Դաշնակցութեան գլխաւոր խնդիրը:

Մ.- Ն.- Ժողովրդավարութիւնը, ազատու-թիւնը, հաւասարութիւնը եւ զօրակցութիւնը (Solidarity) այն հիմնական արժէքներն են, որոնց միջոցով կարելի է սահմանել այժմէական ընկերվար-ժողովրդավար մտածողութեան տես-լականը: Եթէ ազատութիւն կայ, բայց արդա-րութիւն չկայ, այդ ժողովրդավարութիւնը ան-րաւարար է. Հայաստանի մէջ մենք այսօր ու-նինք ազատութիւն, բայց դեռ հասած չենք հա-ւասարութեան եւ արդարութեան: Ուրեմն՝ մեր ժողովրդավարութիւնը կը կարայ:

Դժբախտաբար Հայաստանի վերանկախացու-մը կը զուգահեռի աշխարհի պատմական այն պահուէն, երբ միաբեւեռ աշխարհակարգի մը հաստատումը կարծես անխուսափելի կը թուի ըլլալ: Մինչեւ խորհրդային Միութեան փլուզու-մը աշխարհը երկբեւեռ կ'երեւէր, նոյնիսկ գո-յակաւորուած էր «սարափի հաւասարակշռու-թեան»՝ հիւսկական ուժի միջոցով: Անկասկած, իս. Միութեան փլուզումէն ետք, սպասելի էր միաբեւեռ աշխարհակարգի մը ծնունդը: Բայց նաեւ ընդհանուր համոզում էր, որ միայն բազ-մաբեւեռ աշխարհակարգով կարելի է հաւասա-րակշռութիւն պահպանել: Այսուհանդերձ, մէկ կողմէ տնտեսական եւ ռազմավարական մա-կարդակներու վրայ Մ. Նահանգներու անհամե-մատ եւ անսահման հզօրացումը, իսկ միւս կող-մէ՝ Մ. Նահանգներու հետ մրցակցելու Եւրոպա-յի, Ռուսաստանի կամ Չինաստանի անկարողու-թիւնը, բայց յատկապէս համաշխարհայնացման ընդմէջէն բխող տնտեսական-ֆինանսական նոր համակարգը, որ խնդրող յատկապէս դարձուց Բ. Աշխարհամարտին ետք յառաջացած ամէն կար-գի հաստատութիւնները ու համաձայնութիւններ (այդ համակարգը ինքնին տապալեցաւ), եկան հարցականի տակ դնելու լայնաբեւեռ աշխար-հակարգի մը հնարաւորութիւնը:

Այսօր, Չինոյ դարու սեմին կը տեսնենք, որ դէմ յանդիման ենք մէկ ու միակ գերպետու-թեան մը, որ իր ռազմական ուժով կը փորձէ հաստատել իր ռազմավարական շահերէն բխող նոր աշխարհակարգ մը՝ միանձնեայ որոշելով ի՞նչպէս եւ որո՞ւ դէմ «կանխարգելիչ» պատե-րակներ մղել տեղ մը, իսկ այլուր հաստատել «Pax Americana»...

Մենք մեզի հարց պէտք է տանք, որ Դաշնակ-ցութեան օրինակով որոշակի արժէքներու հա-ւատարիմ կուսակցութեան մը համար ընդունե-լի՞ է այսպիսի իրավիճակ մը, թէ՞ մենք պէտք է միանանք այն շարժումին, որ հարցականի տակ կ'առնէ գոյութեան իրաւունքը նման անարդար աշխարհակարգի մը: Եւ ճիշդ այդ է պատճառը, որ մենք մեզ հարազատ կը զգանք այն շարժու-մին մէջ, որուն անդամներուն ջանքերով մեծա-մասնութիւնը կ'ընդվզի եւ կ'ըմբոստանայ հա-մաշխարհային քաղաքականութիւնը տագնապե-ցնող այս գլխաւոր անարդարութեան դէմ:

Եթէ անցեալ դարու 90ականները եղան Ըն-կերվար Միջազգայնականի եւ ընդհանրապէս ընկերվար-ժողովրդավար մտածողութեան հա-մար փնտռութիւն ու հակասութիւններու տարի-ներ, այսօր արդէն կամայ-կամայ կը նշարուի մտքերու բիւրեղացում եւ գաղափարներու յստակացում մը՝ անարդարութեան այդ հսկայ ալիքը դիմագրաւելու ուղղութեամբ:

«Դ.»- Հայաստանի իրականութիւնը աշխա-տանքի ի՞նչ առանձնապատու կ'ապմանցներ կը պարզէ այս դիտակիւնէն:

Մ.- Ն.- Հայաստանի ներքին պայմաններուն մէջ, անկասկածեալ հետեւող հանգրուանին, շատ արագօրէն ձեւաւորուած է բեւեռացում հասարակութիւն մը, ուր հսկայ գանգուածներ կը գտնուին անապահով վիճակի մէջ: Աւելին՝ եթէ ժողովրդավարութեան զարգացման գոր-ծընթացը կ'իրագործուի դանդաղաբայ՝ հան-գրուանային եղանակով, դժբախտաբար նոյնը կարելի է ըսել տնտեսութեան վերաբերել, որովհետեւ Հայաստանի մէջ սրընթաց հաստա-տուեցաւ եւ արմատաւորուեցաւ դրամատիրու-թեան ամէնէն վայրագ տեսակը:

Եթէ ուշադիր հետեւելնք, կը տեսնենք, որ այս շրջանին Հայաստան արձանագրած է տնտեսա-կան արագ աճ՝ 8 տոկոսի շուրջ, սակայն ատի-կա որեւէ ձեւով բարեկեցիկ չ'ընթացուեցաւ մեր ժո-ղովուրդի բացարձակ մեծամասնութեան հա-մար: Ընդհակառակն՝ աւելի սրեց բեւեռացու-մը եւ անարդարութիւնը: Երկրի տնտեսական քաղաքականութեան մէջ որքան նահանջեց, պետութիւնը իբրեւ տնտեսութիւնը հաւասարակը-նող ու միջնորդող ուժ, այնքան պետութեան փոխարէն այդ դաշտը գրաւեց մասնաւոր դրա-մագլուխը, որ ցարդ չի գործեր օրինականօրէն կարգաւորուած վիճակով:


Հետեւաբար թէ՛ ժողովուրդը տուեց, թէ՛ եր-կիրը: Եւ այժմ Հայաստանի մէջ գոյութիւն չու-նի ընկերային հիւստածք մը, որուն վրայ պիտի կառուցուի արդար պետութիւնը: Ճիշդ հո՞ս է, որ Հ.Յ.Դ. իր խօսքը ունի եւ պէտք է բարձրաձայն յայտարարէ: Եւ հո՞ս է, որ կը կայանայ Դաշնակցութեան գլխաւոր գործը՝ պաշտպանել մեր ժողովուրդին անիրաւուած խաւերը:

Le Savoir-Faire en Lumière

G. AYANIAN & SONS

Dora, (01)255222/3/4/5/6
Gemmayzé, (01)447000-445396
(03)627728/9
Fax: (01)265187-582357
